



ԱՐՅԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Միրելի՛ համալսարանական

Ես «Քո ժամանակն» եմ: Ուզում եմ դառնալ քո ընկերը: Խոսքս չունի եմ, որ մեր սրտիցները չեն սահմանափակվի միայն համալսարանին վերաբերող թեմաներով: Իմ միջոցով կտեսնես քո ժամանակի հեղաքրքիր մարդկանց, առհասարակ, խոսքս չունի եմ՝ ինձ հետ չես ձանձրանա: Հուսամ՝ սպասված հյուր կլինես:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Նոր տարի...

Նոր տարի...
Նոր հույզեր, նորացման հավերժող զգացում, լավատեսության հորդում, ապրումներ...

Նոր տարին կարծես կտրում է մեզ առօրյա հոգսերից, թոթափում անցնող տարվա բացասական հիշողություններն ու տրամադրում լավի, բարու, գեղեցիկի...

Նոր տարվա գիշերն ափսոսանքով հրաժեշտ ենք տալիս ապրած ու չապրած օրերին, հրաժեշտ ենք տալիս՝ հասկանալով, որ այդ օրերն այլևս չեն վերադառնա, որ նրանք անցել են մեր կյանքի պատմության գիրկը:

Այնուամենայնիվ, փորձենք հեռու վանել հուսախաբության տրամադրություններն (նրե՛ն դրանք կան) ու գոհանա՛նք եղածով, մեր հող ու ջրով՝ մեծ ու փոքրով...

Ծնորհավորում եմ բոլոր ուսանողներին Նոր տարվա կապակցությամբ: Թող այն բերի ծով երջանկություն, անափ ուրախություն և խաղաղություն բոլորի օջախներին: Թող իրականացան ձեր բոլորի երազանքներն ու ցանկությունները: Թող Նոր տարին նորանոր հաջողություններով բախի բոլորի դուռը: Թող...

Ծնորհավոր Նոր տարի:

Միրա Ավանեսյան
Լրագրություն 3-րդ կուրս



ՆՈՐ ՏԱՐՎԱ ԳԻՇԵՐ

Թե՛ն աշխարհում փակ դռներ կան,
թող որ բացվեն այս գիշեր,
Ու Նոր տարին նոր խնդությամբ
թող ներս մտնի այս գիշեր,
Թե՛ն կան դատարկ, հարկ տներ՝
մանկան ճիշով թող լցվեն,
Ով փնտրում է սրտանց մեկին՝
հանկարծ գտնի այս գիշեր:
Թե՛ն կան լացող, տխուր աչքեր,
թող ծիծաղեն այս գիշեր,
Կանչող ձեռքերն իրար հասնեն,
հրաշք ապրեն այս գիշեր:
Թե՛ն կան սրտեր՝ չար նախանձով,
դառնան բարի ու ներող,
Եվ ուրիշի ուրախ կյանքով
խանդավառվեն այս գիշեր:
Թե՛ն մոլորված անցորդներ կան,
դարձի թող գան այս գիշեր,
Սրբագործված սիրով մտնեն
իրենց օջախն այս գիշեր,
Թե՛ն կան բախտի փշոտ ճամփեր,
թող ծաղկունքով կանաչեն
Ու երջանիկ սպասումով
բոլորն արբեն այս գիշեր...
Թե՛ն աշխարհում պանդուխտներ կան,
թող տուն դառնան այս գիշեր,
Հայրենական հավերժությամբ
ողջագուրվեն այս գիշեր:

Մեծաքան

«ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՎԵԼԻ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԿԴԱՌՆԱ ԱՐՅԱԽԻ ԶԻԶՈՒՄՈՎ»



Արցախյան գորամասերի անձնակազմի հետ Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի նախաձեռնությամբ անցկացվելիք հանդիպումների մեկնարկը տրվեց ԱրՊՀ-ում: ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական Դավիթ Զամալյանն ու Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի հոգեբանության ամբիոնի վարիչ Կարինե Նալչաջյանը հանդիպեցին ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության հետ:

Հանդիպմանը ներկա էին ԱրՊՀ ղեկավար Մ. Մինասյանը, պրոռեկտորներ, դեկաններ, դասախոսներ, ուսանողներ:

Ողջունելով հյուրերին՝ Մ. Մինասյանը շնորհակալություն հայտնեց նախաձեռնության համար՝ ընդգծելով դրանց դերն ու նշանակությունը ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար. «Հազվադեպ են այն դեպքերը, երբ նախաձեռնությունը կամ առաջարկը դրսից է լինում: Սա այդ եզակի դեպքերց է, որի համար անչափ շնորհակալ ենք»:

ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական հ.գ.թ. Դ. Զամալյանը հանդիպման ընթացքում, խոսելով հայ-թուրքական հակամարտության ցիկլային բնույթից, անդրադարձավ դարաբաղա-աղբբեջանական հակամարտությանը, նրա կարգավորման հեռանկարներին և ուղիներին, այս առումով հայաստանյան ընկալումներին և այդ շրջանակներում գործառվող տերմինաբանությանը, հակառակորդի կողմից պետական սահմանի երկայնքով հեռախոսակցություններին, ինչպես նաև այս գործում՝ ԱրՊՀ դերի և նշանակության մասին:

Դ. Զամալյանի կարծիքով «Արցախի պետական համալսարանը՝ Արցախի մայր բուհը դարաբաղա-աղբբեջանական կարգավորման հարցում ինովացիոն հետաքրքիր գաղափարներ տվող կենտրոն պետք է լինի»:

ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդականի խոսքով ի հակադրություն թուրքական գիտահետազոտական կենտրոնների կողմից ընդհատակյա հովանավորվող այն քաղաքագետների, ովքեր հակամարտության կարգավորման շուրջ հակահայկական թեզերը են տարածում՝ գուցե անգիտակցաբար, պետք է աշխատել հայկական ու հայամետ թեզերի ստեղծման գաղափարի

մշակման ուղղությամբ՝ ուշադրություն դարձնելով հասկապես եզրույթների վրա:

«Թուրքիան Հայաստանի նկատմամբ ունեցած հեռավար ձգտումներն իրագործելու համար օգտագործում է Աղբբեջանին, որն ընդամենը թուրքական նախագիծ է: Հետևաբար հակամարտությունից կարելի է դուրս գալ Արցախի ամբողջական տարածքի պահպանման դեպքում միայն: Արցախի գիշումով պատերազմն ավելի իրատեսական կդառնա, քանի որ թուրքական էթնոքաղաքական հարաբերություններին խանգարում է ոչ միայն Արցախը, այլ՝ հայի գոյությունն առհասարակ», - եզրափակեց Դ. Զամալյանը:

Խոսելով էթնոցենտրիզմի, հայրենիքի ու հայրենասիրության և հայրենիքի ընկալման հոգեբանական խնդիրների շուրջ՝ ընդգծեց գաղափարաբանություն մշակելու խնդիրը, որն, ինչպես հոգեբանը նշեց, սոսկ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» չարենցյան արտահայտությունը չէ: Պետք է զարգացնել այն նորոպի մոտեցումներով ու գաղափարներով: «Չթերագնահատելով թշնամուն՝ պետք է ընդօրինակել նրան այս առումով: Աղբբեջանն ու Թուրքիան մշակված հստակ գաղափարաբանություն ունեն, որ դարձել է ռազմավարություն», - ասաց Կ. Նալչաջյանը:

Հանդիպման վերջում ցուցադրվեցին ռեժիսոր Ա. Զաքարյանի «Կինը» և «Անպետքը» կարճամետրաժ ֆիլմերն ու սոցիալական նշանակության հոլովակներ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՄԱՍԻ Ն



*Տարբեր ազգեր տարբեր ձևով են դիմավորում Ամանորը: Հին Բաբլոնում տոնը նշվում էր գարնանը: Տոների ժամանակ թագավորը իր շքավարով հեռանում էր քաղաքից, իսկ քաղաքաբնակները հնարավորություն էին ստանում ազատորեն զբոսնել և ուրախանալ:

*Միկրոնեզիայում Նոր Տարին ավանդաբար նշվում է հունվարի 1-ին: Բայց այդ օրը կղզու բոլոր բնակիչները նոր անուններ են ստանում և շշուկով հայտնում են դրանք ամենամտերիվ մարդկանց: Իսկ այդ ժամանակ նրանց մտերիմներն ուժեղ հարվածում են թմբուկներին, որպեսզի չար ուժերը չլսեն այդ անունները:

*Իտալիայում ընդունված է Ամանորի գիշերը ազատվել հին իրերից, որոնք մարդիկ դուրս են նետում պատուհաններից: Ընդ որում, որքան շատ իրեր դուրս նետվեն, այնքան շատ հարստություն և երջանկություն կբերի դա Նոր տարում:

*X-XV դարերում Հին Ռուսիայում Նոր տարին նշում էին մարտի 1-ին, 1348 թ.-ից՝ սեպտեմբերի 1-ից, 1699 թ.-ից Պետրոս I-ի հրամանով տոնը սկսել են նշել հունվարի 1-ից:

*Ավանդաբար ամանորյա կոճղը Անգլիա են բերել վիկինգները: Նրանք Ծննդյան օրվա առթիվ մեծ ծառ էին պատրաստում, որը տարվա վերջում այրում էին: Եթե ծառը երկար էր այրվում և ամբողջությամբ, դա խորհրդանշում էր հաջողություն:

*Եղևինի հանդիսանում է ծննդյան և ամանորյա տոների քրիստոնեական խորհրդանիշներից մեկը: Սակայն պարզվում է՝ եղևինն ոչ միայն ուրախություն և տոն կարող է բերել: Գիտնականները պարզել են, որ եղևինների վրա կան սնկեր, որոնք տնային պայմաններում արագորեն տարածվում են և մեծ քանակությամբ սպորներ են տարածում: Դրանք, իրենց հերթին, հազ են հարուցում, ինչպես նաև հանգեցնում շնչառության վատացման: Դրանից խուսափելու համար պետք է տուն բերելուց առաջ լվանալ եղևին, կամ էլ արհեստական ծառ օգտագործել:

*Մինչև հանրահայտ դառնալը Ջեյմս Բելուշին Սանտա Կլաուս

է խաղացել: Հենց այդ աշխատանքի ընթացքում նա գրկվել է իրավունքից, սակայն դերասանը որոշել է շարունակել նվերներ տալ երեխաներին: Այդ «անիրավ» տեսքով էլ նրան բռնել են ոստիկանության աշխատակիցները, իսկ երեխաներով լացելով բղավում էին, որ իրենց սիրելի Սանտային տանում են:

*Թե երեխաները և թե մեծահասակները դիմում են Ձմեռ պապիկին: Երեխաները սովորաբար համակարգիչ են ուզում, իսկ մեծահասակները խնդրում են սառեցնել իրենց տնօրենին:

*Մի անգամ Սպիտակ տան դիմաց առաջին անգամ 1895 թվականին են վառել առաջին էլեկտրական գարդաշղթան

*Ավստրիայում ամանորյա պերսոնաժների կողքին ներկա է նաև «Թռչուն-Հաջողությունը», այդ իսկ

հոգիների դեմ պայքարի հաջողությունը:

*Ռիո դե Ժանեյրոյում տեղադրել են 76 մետրանոց արհեստական տոնածառ, որը ամենամեծն է աշխարհում:

*Ուղղափառները Սուրբ Ծննդից մինչև Հայտնություն ընկած շրջանում Ջորջներ են նշում: Այդ ժամանակահատվածը ոչ միայն քրիստոնեական ծեսերով է հարուստ, այն նաև հեթանոսական սովորույթներով:

*Բրազիլիայում գլխավոր ուտեստներից է համարվում ռսպով ապուրը, որը խորհրդանշում է բարեկեցություն և հարստություն:

*ԱՄՆ-ում Սպիտակ տան դիմաց առաջին անգամ 1895 թվականին են վառել առաջին էլեկտրական գարդաշղթան

*Ավստրիայում ամանորյա պերսոնաժների կողքին ներկա է նաև «Թռչուն-Հաջողությունը», այդ իսկ



պատճառով էլ տոնական սեղանին նրանք հավ չեն դնում:

*Ճապոներեն Նոր տարին հնչում է հետևյալ կերպ՝«Akimashite Omedetto Go-zaimasu».

*1947 թվականի դեկտեմբերի 23-ին ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահի հրամանով հունվարի 1-ը սկսել է համարվել ոչ աշխատանքային:

*Գերմանիայում Ձմեռ պապը նվերները դնում է լուսամուտի գոգին, իսկ Շվեդիայում՝ վառարանի մոտ: Նոր տարուն քեզ հուսադ հարցի պատասխան կարող ես գտնել տաք կաթսայի մեջ նետելով բրինձ:

*Եթե արդյունքում հստակ պատկեր է գծվում, նշանակում է հարցդ դրական պատասխան է ստանում, իսկ եթե ոչ՝ ուրեմն բացասական:

*Գրելանդիայում գրեթե միշտ շատ ցուրտ է և չկա սառույցի հասանելիության հետ կապված խնդիր: Այդ իսկ պատճառով տեղացի էսկիմոսների մոտ գոյություն ունի միմյանց սառույցից պատրաստված

նվերներ տալու սովորույթ:

*Հարավային երկրներում, որտեղ ձյուն չի գալիս, մարդիկ այլ կերպարներ են մտածել, օրինակ Լամբոջայում կա «Տաք պապ»:

*Ֆրանսիայում տոնական սեղանին մատուցում են հնդկահավ և պանիր:

*Ֆինլանդիայի և Ռուսաստանի սահմանի վրա 2001-ին հանդիպել են Իոլուպկուն և Ձմեռ պապը:

*Կա կարծիք, որ Նոր տարվա շեմին չպետք է փող տալ, հակառակ դեպքում ամբողջ տարի պետք է պարտքեր մոծել:

*Սկանդինավյան թերակղզում ամանորյա սեղանին են դնում բրնձե ապուր՝ մեկ նուշով: Ով գտնում է նուշը, նրան երջանկություն է սպասվում ամբողջ առաջիկա տարում:

*Անգլիայում ամանորյա զանգերի հնչելու հետ զուգահեռ բացում են տան ետնադուռը, որպեսզի հին տարին հեռանա, իսկ վերջին զանգը դիմավորում են գլխավոր մուտքի մոտ՝ դիմավորելով Նոր տարին:

*«В лесу родилась ёлочка» երգի բառերը հրապարակվել է 1903 թվականին մանկական մի ամսագրում:

*Ավստրալիայում Սանտա Կլաուսը ամանորյա շոգին հագնում է տոնական լողազգեստ և նստում ջրային մոտորանավակի վրա:

*Հնում ընդունված է եղել Ձմեռ պապիկին տալ նվերներ՝ չակնկալելով նվերներ նրանից:

*Իտալիայում առողջության, երկարակեցության և բարեկեցության խորհրդանիշներ են համարվում ռսպը, ընկույզը և խաղողը:

*Հնուաքրքիր փաստ՝ Սանտա Կլաուսը կին ունի, ով սովորաբար մարմնավորում է ձմեռը:

*Հնուց ի վեր մզամուրճ (mistletoe) ծառատեսակին վերագրվում էին կախարդական հատկություններ: Որոշ երկրներում կա սովորություն, ըստ որի՝ տղամարդն իրավունք ունի համբուրել ցանկացած աղջկա, ով Սուրբ Ծննդյան օրը կանգնի այդ ծառի ճյուղի տակով:



ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԱԲՆԱԿ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ



ՌԻՀՏԱ, ՀԿ և Լ բաժնի նախաձեռնությամբ դեկտեմբերի 12-ից 13-ն անցկացվել է շախմատի մրցաշար ԱրՊՀ հանրակացարանում բնակվող ուսանողների միջև:

Մրցաշարն անցկացվեց 3 փուլով, որի արդյունքում եզրափակիչ անցած մասնակից աղջիկների և տղաների միջև ծավալված թեժ պայքարի արդյունքում հաղթող ճանաչվեցին՝

1-ին տեղ՝ Ժիրայր Ավանեսյանը (պատմության և քաղաքագիտության ֆակուլտետ),

2-րդ տեղ՝ Աստղիկ Սողոմոնյանը (հայոց լեզվի ու գրականության և օտար լեզուների ֆակուլտետ),

3-րդ տեղ՝ Սերգեյ Աթայան (ագրարային համալսարան):

Մրցավար Ս. Ջավադյանի խոսքով ուսանողները լավ են տիրապետում մտավոր լարում պահանջող խաղի նրբություններին և չնայած խաղի սիրողական մակարդակին, մասնակիցները խաղի բավականին լավ ընթացք ու արդյունքներ են արձանագրել:

Մրցաշարի մասնակիցները ևս գոհ էին խաղի ընթացքից ու արդյունքներից և հուսով, որ նման միջոցառումները կկրեն պարբերական բնույթ՝ ուսանողի առօրյա դարձնելով առավել հետաքրքիր ու յուրօրինակ:

Հաղթողները պարգևատրվեցին վկայագրերով ու նվերներով, իսկ մյուս մասնակիցները՝ հավաստագրե-